

— Պատուեր մը ունի՞ս, իշխան,— հարցուց երիտասարդը թուղթը գրպանը դնելով:

— Պատմէ՛ վիճակս ինչպէս որ կը տեսնես:

— Յուսամ հաստուած, որ Կոստանդնուպոլիս հասնելէդ քիչ վերջ այս թուղթին պատասխանը կը բերեմ:

— Կարելի է,— ըսաւ Թեոդորոս սառն ձեւով:

Երիտասարդը այլեւս չի խօսեցաւ. ժողուեց իր բերածը, յարգանօք ողջունեց զթեոդորոս, դուռը նոյնպէս գոցուեցաւ եւ գնաց, եւ քանի մը ժամ վերջը, երբ Թեոդորոս կալանաւոր կ'ելնէր ճամփայ իջնելու Կեռասուն, նա էլ հակառակ ճամուլաւ Հայաստան Ռշտունեաց երկիրը կ'ուղղէր իւր ընթացքը: Պէտք չէ զարմանայ որ այս երիտասարդին վրայ, վասնզի ինչպէս եղած են եւ միշտ պիտի լինին անձնամոլութեան, ստութեան, անզգամութեան հակամետ ոգիներ, նոյնպէս են եւ միշտ պիտի լինին ճշմարտին, բարուոյն, գեղեցկին սիրահար ոգիներ, որ կրօնքի, հայրենեաց եւ ազնուական գաղափարաց մարտիրոսներն կը տեսնենք ամէն գարու մէջ: Թեոդորոս՝ փորձառու մարդկային սրտին, ցուրտ դիմոք ընդունեց երիտասարդը, վասնզի կրնար դաւաճան մը լինիլ, թումայի պէս սեւ յօդի մը ունենար, եւ նորա գործիք լինէր. բայց կրնար, եւ որ աւելի հաւանական կ'երեւէր իրեն նորա կերպարանքի պարզութենէն— ազնիւ ոգուոյ մը տէր լինիլ, ուստի այդ տողերը գրեց եւ իրեն յանձնեց՝ որոց յայտնութենէն ոչ մէկ վտանգ չէր կրնար յառաջ գալ եւ որ գիտէր թէ Սեթայ ի գործ պիտի դնէր առանց այդ նամակին:

Յոկանաւ մը Կեռասուն իրեն կը սպասէր, եւ որ գարնան առաւօտ մը կանուխ հասաւ կայսերական քաղաքը, մտաւ ոսկեղջիւրն ներս եւ խարիսխ ձգեց. նաւամատոյցի առաջ քանի մը զինուորք միայն մնացին, իրենց գլխաւորը եւ մեծ մասը թողին գնացին քաղաք: Թեոդորոս այն ատեն յարմար ժամանակ գտնելով, երիտասարդ մը, որուն շահասիրութիւնը եւ ազահութիւնը առակի եւ կատակի նիւթ եղած էր իւր զինուորակցաց՝ քովը կանչեց եւ իրեն ըսաւ.

— Դու եթէ ուզես՝ հիմա այս վայրկենիս կրնաս հարիւր ոսկի ստանալ առանց մեծ աշխատութեան:

— Միթէ՞,— հարցուց երիտասարդը զարմացած:

— Այո՛, եւ շատ դիւրաւ: